41. ՋԸՄՇԻՏ ՈՒ ՈԱՇԻՏ

Կէղնին ու չէզնին էրկու դրկից կէղնին, մեկն հայ կէղնի, մեկն՝ քուրտ։ Կէղնի էդոնց էրկու տղա։ Հայն ուր տղի անուն կդնե Ջըմշիտ, քուրտ լե՝ Ռաշիտ։

Էդ էրկուս կէղնին հ՝իրարու աղբեր։ Կմեծնան, ուրանց հացի թատարուկ կտեսնան, օր էրթան խարիբութեն։ Ջըմշիտ կէլնի, կէրթա ուր պապուն՝ թե.— Մղիկ ի՞նչ սիլահ կա։

Հերն կասե.— Մղիկ օր մանցեր է, թուր ու նետվանեղ մը։

Կբերե, կիտա տղին։ Կառնե կէրթա։ Կէրթա, կնստի կարմնջի վրեն, աղեկըմ ավղով կսրբե, ժանկ կհանե, կէձդե վիզն ու կէլնի կառնե ըզՌաշիտ, կէրթան։

Կէրթան, կէրթան ճամբախ, ուրանց ռաստ կիգա մարդըմ։ Կասե.— Աղբըրտանք, դուք հ՝ու՞ր կէրթաք։

Կասին.— Կէրթանք խարիբութեն։

Էդ մարդ կասե.— Ձիս լե չը՞ք էնի ձըզի հ՝ընկեր, ես հըմ լողլորդ իմ, հըմ լե ռամլեդար։

Կասին.—Հ՝որի՞ չընք էնի, դու օր հ՝իգաս։

Կէղնին հ՝ընկեր ու կէրթան։

Կէրթան, կէրթան, սարու մը գլուխ կէնին կրակ, կնստին, մեկ լե կտեսնան, օր տեխըմ կրակ կբացվի ու կխփվի։

Կէլնին էրկու աղբեր կէրթան, կտեսնան օր քար մե ըուս կիտա։ Կիգան Ջըմշիտին կասին.—Քար մը կա էնդեխ. օր կբացվի, դրսվի լուս կէրևա։

Կէլնին իրեք աղբեր հ՝իդրաց կիգան։ Քար կբացվի, կմտնին ներս, կտեսնան ճղնավորըմ կա էդտեխ, կճգնե։ Յոթն օր ուրանք լե էդ ճգնավորի

հետ կճգնին։ Ճգնավոր կառնե Ջըմշիտի թուր, յոթ կապս կէնե, յոթ հանգուց էլ կկապե վրեն, կասե. «Դըհ գնա, էլ սուր-թուր քու վրեն չբանի»։ Կէլնեն շնորհակալ կէղնին ճգնավորից, կիտան զճամբախ ուրանց հ՝առաջ, կիգան։ Կիգան սարու մը գլուխ։ Ռաստ կիգա ուրանց վերի էծըմ։ Ջըմշիտ կզարկե զնետվանեղ, քեսի ճակատ, քիչըմ կէրթա, էնդին կընկնի։ Կէրթան կբերին։ Կէնին իրեք կտոր։

Ջըմշիտ կասե.— Որ կմնա հ՝իմաց, էփե զուր հիսեն, ուտե։

Լողլորդ աղբերն կասե.— Ես կմնամ։

Կմնա զարթուն, կէփե զուր հիսեն օր ուտե։ Մեկ լե էնդիեն կէլնի յոթ գլխեն դևըմ, կզարկե վրը գլխուն, կառնե ուտե ու կթողե կէրթա։

Ըստ հաղ Ռաշիտ կմնա։ Կէլնի կասե. «Իմ աղրբրտանք ինչ պեբախտ են, էփեր ին զուրանց հիսեն, կերի, զիս չզարթնցուցած են»։ Կէլնի կէփե զուր հիսեն օր ուտե, էդ է կհասլի, էնդիեն կէլնի յոթ գլխեն դև, կզարկե ձեռաց, կառնե կուտե, կթողե կէրթա։

Էդ անգամ Ջըմշիտ կէլնի կասե. «Իմ աղրբրտանք ինչ պեբախտ են. էփած են զուրանց հիսեն, կերած են, զիս չիմցուցած են»։

Կէփե զուր փայ միսն օր ուտե, կտեսնա, օր էնդիեն յոթ գլխեն դևըմ ելավ, էկավ, ասեց.—Ջըմշիտ, Ջըմշիտ, քիչըմ տուր ընծիկ լե, ուտեմ։

Ջըմշիտ ասեց.— Մենք աղբեր չի՞նք, արի նըստի հիդրաց, ուտինք։

Դևն օր էկավ քիչըմ մոտեցավ, Ջըմշիտ զթուր թալեց, փոր էրեց էրկու։ Դևն ելավ օր փախնեբ, Ջըմշիտ հ՝ընկավ ետևեն։ Գնաց սարու մը գլուխ ծակըմ կեր, թալեց զինք, մըտավ մեջ։ Ջըմշիտ զտեխ նշնեց, դարձավ էկավ, հ՝արթնցուց զուր աղբրրտանց, գացին կանան վրը ծրկուն, զՋըմշիտ հ՝իջուցին ծրկու մեջ։

Ջըմշիտ կհ՝իջնի հորու մեջ, կէրթա դուռըմ կբանա, կտեսնա օր հուրնի-հրեղեն ախչիկըմ նստուկ է, քըրկա կէնե։

Կասե.— Հողածին, հ՝ուրվե էկեր իս, էնդիով գնա, հըմկա կէլնի յոթ գլխեն դև, հանա կտոր հանա անկաշ կթողե։

Կասե.—Չէղավ, գնա իմ մեկէլ քուրոջ խեչ։

Կբանա ուրիջ դուռըմ, կտեսնե հոդ լե հուրնի-հրեղեն ախչիկըմ նըստուկ է, քըրկա կէնե։ Էդ լե կասե.— Հողածին, հ՝ուրվե էկեր իս, էնդիով գնա, հըմկա կէլնի յոթ գլխեն խափշիկ, հանա կտոր հանա անկաշ կթողե։

Ջըմշիտ կասե.—Ես էկեր եմ, օր զէնի սպանեմ, ցուցու տեսնամ՝ հ՝ուր է։

Ախչիկն կասե.— Դու էդա թրով զէնի չըս կրռնա սպանի, հանդե էնդոր թուր կպրե կարսի մեջ, կէրթաս քառուն տիկ ջուր կըլնաս կպրե կարսի մեջ, կասես՝ «Ցա, հացն ու գինին, տեր կենդանինն», կքաջես կէլնի։

Սորա կիգաս կանես վրը գլխուն, մեկ կզարկես, մեկ կթրռնես, ելնես իմ միշաց, օր չը թռնես ելնես իմ միջաց, հընդե կվառիս դու լե դևի հետ. էրկու դրրպ պետկ է զարկես։

Ախչկա ասածի պես, կէրթա քառսուն տիկ շուր կբերե, հ՚ընա կպրե կարսի մեջ, կասե. «Յա, հացն ու գինին, տեր կենդանին»։ Կքաշե զթուր, կիգա կանի դևի գլխու վրեն, կզարկե ու կէլնի կանի ախչկա մեջաց, էրկու հեզ կէնե, զդևին կսպանե։

Զդևին օր կսպանե, կէլնի կէրթա, ինչ օր կէղնի դևի էրի մեջ, կբերե, կապե ախչկներու հետ, կքաշեն, հանեն դուրս։ Դուրս օր կէլնին, Ջըմշիտ կասե.— Որ կուզե հոկցա դառնա էրթա ուր տուն։

Ռամլեդար աղբեր կասե.— Ես։

Ջըմշիտ կիտա ախչիկըմ ու ուրեն փարա, կառնե կէրթա։ Թամբիհ կէնե.— Թուղթըմ կէնիս, կախես քու պատեն, հ՚ինչ գա օր էն թուղթ ինքն ուրեն փըրթավ, հ՚ընկավ գետին, հ՚իգաս ընծիկ իմդատ, հանդե ես նեղության մեջ եմ։

Էնի կէլնի կէրթա ուր տուն, թուղթըմ կգրե, կապե պատեն։

Ջըմշիտն ու ըՌաշիտն է, կառնեն զէն մեկել ախչիկ հետ ուրանց, կէրթան։

Կէրթան, կէրթան, կէլնան սարու մը գլուխ, նը կրակ, նը ճրագ։ Մեկ լե կտեսնան, օր ցած կրակ կվառի։ Ռաշիտ կէլնի կէրթա։ Կտեսնա մեծ քեոշկըմ, պառավըմ դրեր է մեծ օճախըմ ու կվառե։ Կուզե կրակ, չի տա, կքըֆրե զՌաշիտին։

Ռաշիտ կդառնա կիգա, կասե Ջըմշիտին.— Պառավըմ նստուկ էր էնտեխ, զօճախ կվառեր, ուզի կրակ, քըֆրեց ընծիկ, չտվեց։

Ջըմշիտ ըստ հազ կէլնի կէրթա, կուզե պառվուց կրակ, չի տա, կքըֆրե։ Ջըմշիտ հ՚ուշիկըմ կվերցու զպղինձ, էման շուր կկոռծե էդոր գլխուն։ Նաննեն կվրժվրժա, կէլնի մեծ տղեն կտեսնա, օր ուր մերն է։

Կէլնի կէրթա, կիմցու զուր քառսուն աղբեր, նաննեին լե քառսուն տղա կէղնեն պառկուկ էդ քեոշկի մեջ։ Կէլնեն քառսուն լե կիգան, պզդիկ աղբեր շանօրթի կէղնի, կասե.— Ախբրրտանք, էդի Ջըմշիտն է, էրթանք անուշութենով խոսենք զհետ, օր զմզիկ չմորթե։

Կէլնեն կիգան Ջըմշիտի խեչ, կսազեն կեղծավորութեն, կասեն.— Մենք ծրռուկ ենք էդա էրկրի թագավորի ախչկա վրեն։ Ինչքան օր մենք կէլնենք դուրս, էդոնք կըվախնեն, մտնեն ներս։

Կէլնեն կէրթան կանեն բաղնի հ՚առջև, քառսուն աղբեր կցուցուն Ջըմշիտին զթագավորի քեոշկ ու սարեն։

Ջըմշիտ կբռնե զքառսուն, կդնե վըր իրարու, կէլնի բաղնի վրեն, կտրե զգլուխ ուրանց, կթալե բաղնով ներս, շանդակ դուրս։

Կէլնի լուսուն կառնե զՌաշիտն ու զախչիկն, կէրթան նստեն խահվեն, օր խահվե մը խմեն, ելնեն էրթան։

Թագավոր լուսուն օր կէլնի, կտեսնա քառսուն դևի գլուխ կտրուկ են, թալուկ բաղնից ներս, ջանգըկներ դուրս։ Տալալ կիտա կանչել, թե. «Որն որ զէդ դևեր սպաներ է, թըղ հ՝իգա, ինչ օր հ՝ուզե, կիտամ»։

Էն կիգա կասե՝ ես եմ, էն կիգա կասե՝ ես եմ։

Թագավոր կասե.— Դացեք էնդին, ես զձզիկ գինամ, դուք հար հ՝էսօր հ՝ո՞րի չըք սպանե։

Մարդըմ կիգա կասե.— Էրկու մարդ կա, խահվեն խահվա կխմեն, թե օր էղնեն, էնդոնք էն։

Թագավոր կկանչե զէդոնք, կիգան, կասե.— Ձեդա դևերու գլխներ դո՞ւք եք կտրի։

Կասեն.— Հա։

Թագավոր կէլնի, զուր ախչիկ կիտա էդոր, կէնե յոթն օր, յոթն գիշեր հարսնեկ ու կհասնեն ուրանց մուրազին։

Ջըմշիտ կասե Ռաշիտին.— Դու լե չըս էրթա՞ քու տուն։

Կասե.— Կէրթամ։

Կէլնի դևի բնեն հանած մեկել ախչիկն ու քիչմը փարա կիտա, ճամբու կդնե, թամբիհ կէնե թե. «Ծբօր խահվա խմեցիր, կարմրավ, իգաս իմդատ ընծիկ, հանդե ես շատ նեղության մեշ եմ»։ Կէլնի Ջըմշիտ, կառնե զթագավորի ախչիկն ու կէրթա։

Կէրթա, շատ ու քիչ աստված գինա, ռաստ կիգա մարդու մը, անուն Ջանփոլադ է։ Կհասնեն հ՝իբար, Ջըմշիտ կբռնե զՋանփոլադ կկտրուտե. հ՝ըլնա գետին։

Կէրթան քիչըմ էնդին, Ջըմշիտ ետևանց կիշքե, օր մեկ լե ուր ետևվեն կիգա, Ջանփոլադ սաղցեր է։

Ջըմշիտ մեկ լե կբռնե, կտրուտե կըլնա գետին, կէրթա քիչըմ տեխ, կիշքե մեկ լե Ջանփոլադ սաղցեր է ու հ՝ընկի ուր ետև։

Կիգա կհասնի, մեկ լե կբռնե կտոր-կտոր կէնե, կըլնա գետին, մեկ լե կսաղնա, կէլնի հ՝ընկնի ուր ետև։ Ինք ուրեն կասե. «Էդոր հետ զորով չէղնի, ելնեմ էրթամ, անուշութենով խոսեմ ուր հետ, տանեմ իմ տուն, էղնենք աղբեր, էրթանք ավուխուշ էնենք, հ՝իդանք մեկ տեխ ապրենք»։

Կէլնեն կառնեն զիրար, կաղբըրնան զիրարու հետ ու կէրթան էդ Ջանփոլադի քեռշկ։

Էդտեխ լե, էդ Ջանփոլադի էրկրի թագավորի տղեն լե ծրռուկ կէղնի էն ախչկա վրեն, օր Ջըմշիտն է բերի։ Ճարճի կիտա կանչել, թե. «Որ էրթա բերե զՋըմշիտի կնիկ, ինչ հ՚ուզե, կիտամ»։ Ջէդի կլսե քաջանց պառավըմ, կիգա կասե.—Ես կէրթամ բերեմ։

Կէլնի նանեն, կհեծնի ղձրձում, կիգա։ Կիգա զծով կընցնի, խորոտիկըմ ղձրձում կհորե ծովու պռուկ ու կելնի կիգա։ Կիգա կանի Ջանփոլադի քեռշկի դուռ, կզարկե, զարկե։

Ախչիկ կէլնի, կասե.— Էն ո՞րն է։

Պառավ կասե.— Ես իմ։

Ախչիկ կբըշաե, չբըշտե, չէրթա. կմնա մոմոզուկ պատընվեր հար հ՚իրկուն կանուկ։ Հ՚իրկուն Ջանփոլադն ու Ջըմշիտ կդառնան ավուխուշից, օր կիգան, Ջանփոլադ կվազնե օր զարկե։ Ջըմշիտ կասե.—Հ՚որի՞ կզարկես, խեղճ է, թըխ հ՚իգա մըր տուն, խըզմաթ կէնե մըզիկ։

Ջանփոլադ կասե.— Խեղճ չէ, էդորնե չատ բան կիգա դուրս։

Ինչ կէնե Ջանփոլադ, Ջըմշիտի վրեն չկառնա։

Կառնեն ներս, ութն օր կմնա, կասե.—Զզիկ լվացք չըք էնի՞, ես էդա ութն օր էկեր եմ, իմ հալավ կրխտոտեր է։

Ախչիկն կասե.— Հ՚էսօր կէնինք լվացք։

Ջանփոլադ կէլնի զուր հալավ կփոխե, կէրթա, Ջըմշիտին լվացք փոխ չը մնա, կմնա տուն, պառկի քնի։ Էդ օր Ջանփոլադ մենակ կէրթա ավուխուշի։

Պառավ խըստու զՋըմշիտ կթողե տուն։ Եբ կպառկի քնի, զթուր կպըլուլե հալավի մեջ, կտանե ճամբախ, կապսըմ կասե, մեկ հանգույց կհարձկե, Ջըմշիտ կէղնի կիսամեռ։ Կտանե զթուր, թալե ծովու մեջ, կչըքի ավղի մեջ, կէլնի հ՚ուշապ օձըմ, փաթվի թուր, զգլուխ դնե վըր խապչին, պառկի քնի։

Պառավ կէնե լվացք, կխըլըսի։ Ըստհաղ ախչիկն կբերե լողկցու, օր կլողկըցու, զծամեր կփաթե վըր ձեռաց, գամբոսըմ կզարկե ախչկա գըլխուն, ուշք կընցնի։ Կքաշե ծովու պռուկ, կհանե ղձրձում, զախչիկ կմտու մեջ ու կընկնի վըր ծովուն ու կքշե։ Կտանե դնե թագավորի տղի հ՚առջև։

Հ՚իրկուն Ջանփոլադ կդառնա, կիգա, կտեսնա օր Ջըմշիտ շըռջուկ է դետին, կլլկե, չլլկե, չէլնի։ Կիջնի կիջքե, օր իմալ լվացք էրած են ու փռի զհալվըներ, մեկ լե հըմալ մանցեր են փռուկ, նը ախչիկ կա, նը պառավ։

Ջանփոլադ զխելք կորցու, կընկնի սարեր, չարա չկա։

Ջըմշիտի աղբըրտանքն է, օլոր օր կէլնեն, տեսնան օր մեկի թուղթն է փրցի հ՚ընկի գետին, մեկին լե խահվեն կտրեր է կարմիր արուն ու կէր-

թա։ Կհասկնան, օր ուրանց աղբեր նեղության մեջ է. կէլնին ու կընկնեն ճամբախ։

Կիգան ռաստ կիգան Ջանփոլադին։

Ջանփոլադ կհարցու.— Աղբըրտանք, հ՚ու՞ր կէրթաք։

Կասեն.— Կէրթանք մըր աղբոր հավարին։

— Ձըր ախբեր ո՞րն է։

Կասեն.— Ջըմշիտ։

Ջանփոլադ կասե.— Ջըմշիտ հանդե հ՚ընկուկ իմ տուն, մեռուկ է՝ չըմ գինա, զարթուն է՝ չըմ գինա։ Կլըլկեմ, չլըլկեմ՝ չիմնա։

Կառնե Ջանփոլադ զէդոնք, կիգա ուր տուն։

Ֆալչի աղբեր աստղ կիշքե, կասե.— Ջըմշիտին բան չկա, մըր աղբոր աստղ լուսով է։

Կէլնեն զթուր կփնտռտեն, չգտնան։

Ջանփոլադ կասե.— Ձըմ գինա, իմալ են էրի։

Էսդին, էնդին կզարկվեն, կէրթան տեսնան, օր թուր հանդե մեջ ծովուն ձքուկ է, վիշապըմ փաթվեր է հ՚ինք ու զգլուխ հանի, դրե վըր կոթին։

Կճամբե տնեն չվանըմ բերե ֆալչի աղբեր ու կկապե մեջկ, կիշնե ծովու մեջ, կասե՝ եբ օր ասի՝ քաշեք, սորա կքաշեք։

Կիշնի ծովու մեջ, աղեկըմ կկապե զթրի բալըխըն ու կասե՝ քաշեք։

Օր կքաշին, թուր կծործա կիգա, հ՚ուշապն կիմնա, պոչով կզարկե զջուր կկտրե, ինչ ֆայդա, ձեռքեն գացեր է։ Կբերեն կապս կէնեն, հանգույց կհանգույցեն, զթուր կտանեն տուն, Ջըմշիտ կելնի նստի։ Կասե.— Օխե՜շ, ինչքա՜ն ենք քնի։

Աղբըրտանք կասեն.—Ի՞նչ քնել է, հեղըմ ելի, տես ի՞նչ է էղի, սորա ասե՝ ինչ անուշ ենք քնի։

Աղբըրտանք կուտեն, կխմեն ու կընկնեն ուրանց ճամփախ, կէրթան։

Ջըմշիտ կէլնի կառնե Ջանփոլադն ու կէրթա թագավորի տղի վրեն կռիվ։ Կէրթան, կհասնեն, ութ-ին օր կռիվ կէնեն, մարդ չմնա էդ թագավորի էրկրի մեջ։ Ըստհաղ զկնկտիք ու զախչրկներ քոմեն, ճամբեն կռիվ։ Զէդոնք լե կշարդեն։

Սորա կիշքեն, օր մարդ էլ չմնաց, մեկ մարդ մանցեր է, կբռնեն, ճամբեն, էրթա թագավորի մոտ։ Կասեն.— Մենք անոթի ենք, մըզիկ հաց թըղ ճամբե իգա։

Թագավորի տղեն կհասկնա զէդոնց միտք, կէլնի ախչիկ դնե, ճամբե, հ՚իգա։

Եբ զախչիկ կառնեն, ըստ հաղ զթագավորի տղեն ու զպառավ կբրո-

նեն, բերեն դնեն բարութի մեջ, մեկ կէլնեն հ՝առին, մեկ կիջնեն դետին։ Կվերցուն զօտկ ու ձեռկ ուրանց, թալեն ծով։

Նոր կառնե Ջըմշիտ զուր կնիկն ու Ջանփոլադ, դառնան հ՝իգան։ Յոթն օր կզարկեն ու կխաղան։ Էնդոնք հասան ուրանց մուրազին, դուք լե հասնեք ձըր։

Աստծուց հ՝իշավ իրեկ խնձոր, մեկ սուտ ասողին, մեկ չլսողին, մեկ անկաջ չէնողին։